ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 փետրվարի 2018թ. թիվ 43-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 27-Ի ԹԻՎ 119-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի «Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» թիվ 384-Ն որոշման հավելվածի 4-րդ կետի «ժա» և 5-րդ կետի «բ» ենթակետերի, ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասով և ՀՀ Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «ՀՀ մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.22 կետով՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. ՀՀ Լոռու մարզպետի 2016 թվականի ապրիլի 27-ի «ՀՀ Լոռու մարզի քաղաքացիական պաշտպանության ծառայություններ ստեղծելու, դրանց կանոնադրությունները և տարեկան աշխատանքային պլանի օրինակելի ձևը հաստատելու մասին» թիվ 119-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 12-րդ ենթակետով՝

«12) Բնակչության հատուկ սպասարկումների՝ ծառայության պետ նշանակել ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետին:»

2. Որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ ժբ. պարբերությամբ՝

«ժբ. ՀՀ Լոռու մարզի քաղաքացիական պաշտպանության բնակչության հատուկ սպասարկումների ծառայության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 11.1-ի:»

3. Հաստատել սույն որոշման 2-րդ կետում նշված կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետին՝

1) մինչև 2018 թվականի ապրիլի 1-ը մշակել, ՀՀ ԱԻՆ ՓԾ Լոռու մարզային փրկարարական վարչության և քաղաքացիական պաշտպանության

հանրապետական համապատասխան ծառայության հետ համաձայնեցնել և իմ հաստատմանը ներկայացնել բնակչության հատուկ սպասարկումների ծառայության քաղաքացիական պաշտպանության պլանը.

2) ելնելով ծառայության առջև դրված խնդիրներից՝ միջոցներ ձեռնարկել ծառայության կազմավորումներն անհրաժեշտ քանակի ուժերով ու միջոցներով ապահովելու ուղղությամբ՝ ներգրավելով նաև ՀՀ Լոռու մարզում գործող համապատասխան կազմակերպություններին.

3) հետևողական աշխատանք տանել ծառայության մշտապես պատրաստ լինելու ուղղությամբ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2018թ. փետրվարի 14
ք.Վանաձոր